ՆՈՐ–ԴԱՐ

№ 9 ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի 17 Յունուարի 1896 Չորեքշաբթի 17 Յունուարի ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 9

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ», կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., երկլամների համար կրկնապատիկ։

ՆՈՐ–ԴԱՐ

(ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

Քաղաքական, գրականական ամենօրեայ թերթը **1896**-ին հրատարակւում է Թիֆլիսում նոյն դիրքով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և տօներին հետևող օրերից

Տարւոյ ընթացքում «Նոր-Դար»-ը լոյս կըտեսնի առնուազն 220—225 համար։

«Նոր-Դար»-ը ստանում է տեղական և հեռագրեր և ունի նշանաւոր կեդրոններում յատուկ թղթակիցներ։

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի։ Թիֆլիից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հատով դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում՝ 5 կ.։

ԵՒՐՈՊԱՑԻ և այլ հեռաւոր երկրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

ԱՄԵՐԻԿԱՑԻ բաժանորդները վճարում են տարեկան 8 դոլար։

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից սկսեալ։

ԹԻՓԼԻՍՈՒՄ բաժանորդ են գրւում հետևեալ «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրատները։

Խմբագրատունը գտնւում է Գուչկինսկայա փողոցում, Սկուերի դիմաց։

Օտար քաղաքներից բաժանորդ գրւողները դիմում են խմբագրութեանս այս հասցէով՝ **Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты ,,НОРЪ–ДАРЪ“** կամ Caucase, rédaction du journal «Nor-Dar».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ լրագրութեան յիսնամեակը Կովկասում։

Հայերը և ուղղափառութեան շահերը Կովկասում։

Քրոնիկոն.— Օտարերկրեայ հիւպատոսները։ Իշմիլեան պատրիարքի հրաժարեցման խնդիրը։ Զրպարտութիւններ Աթոռական հայոց դէմ։ Քաղաքագլխի պաշտօնակատարի ընտրութիւնը։ Դիւղատնտեսական կըրթութեան գործը։ Թիֆլիսի ֆեյլչերների դպրոցը։ Միջոցներ սիֆիլիսի դէմ։ Մարգանեցի արդիւնաբերողների ժողով։ Տուրք հանքային ջրերը գնացողներից։ Ցօնածառ և կոնցերտ։ Տպագրողի անհոգութիւնը։

Թղթակցութիւններ.— Նամակ Թիւրքիայից.— Կ. Պոլիս։ Նամակ Անգլիայից, Մանչեսթր—Դ.։

Քաղաքական.— Վերջին տեղեկութիւնները Թիւրքիայի գործերի մասին։ Թիւրքիա։

Հեռագրներ։

Բանասիրական.— Դարավերջի նշաններ։

Տեղեկատու.

Յայտարարութիւններ.

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

(Անցեալից մի տեսութիւն։)

1894 թուականի վերջերին էր, որ բոլորից հայ լրագրութեան 100-ամեակը։ Մի ամբողջ դար կլորուց այն օրից, երբ հեռաւոր Հնդկաստանի հայ գաղթականական մի վայրում, Մադրաս քաղաքում, բարեյիշատակ Զմառնեան Տէր-Յարութիւնի ջանքերով լոյս տեսաւ անդրանիկ հայ լրագիրը՝ «Ազդարար»-ը։ Մեր լրագրութեան հարիւրամեայ տարեվիցի մասին իւր ժամանակից շատ յառաջ էէ յայտնուեց լրագրութեան էջերում և այդ առթիւ լոյս տեսած գրքերում, բայց մեր գրագէտներից և ոչ մինը տապալել իմաստասէր կլորշ կերպով հարց բարձրացնելու հայ պարբերական մամուլի հարիւրամեայ գոյութեան առթիւ մի փառաւոր յոբելեան կատարելու, մի տօնախմբական հանդէս, որը առիթ պիտի լինէր լրագրութեան գործի տարած մանև ուժեղացման հասարակութեան մէջ։

Ինչպէս 1894 թուականի հոկտեմբեր ամիսն անցաւ աննշան, անուշադիր, այնպէս էլ լուռ ու անխօս անցաւ մեր, մասնաւորապէս Կովկասի հայերիս համար նշանաւոր և ներկայիս ամբողջ գրագէտ հասարակութեան ուշք ու միտքը գրաւող լրագրութեան 50-ամեայ տարեշրջանը։ Ներկայ տարւոյ սկզբին լրացաւ կէս դար, որ Կովկասում, ռուսահայոց մէջ, հայ լրագրութիւնը գոյութիւն ունի։ Լուռ ու անխօս անցաւ սակայն, մի նշանաւոր բան չենք համարում, սակայն, մի-մի յօդուած նուիրելը. հարկաւոր էր մի գործ անել, մի նոր բան լրագրութեան յառաջադիմութեան օգտին, մի քայլ առաջ, մի որև է հնար լրագրութեան գործը հասարակութեան աւելի մօտեցնելու համար։ Ոչ մի հանդէս, ոչ մի ժողով լրագրողների—ահա ինչ է երևում։ Կատարւում է թատրոնական գործի մի յորելեան—անցնում է չքեղ, կարդացւում են ճառեր և այլն. կատարւում է կամ կրկատարուի մի կաթոլիկ գաւառացի վարդապետի յոբելեան, մեզ յայտնի չէ որ գործերի համար, զիտենք միայն, որ մեր ջահէլները միմեանց նայելով պէտք է իրենց հնոցհներները ցոյց տան. իսկ լրագրութեան գործի տօնը, որի նպատակն է կամ լինելու է հասարակութեան, ազգի և եկեղեցու յառաջադիմութեան ու բարօրութեան գործի վերավարութիւնը, կրկնում ենք անցնում է լուռ և անխօս։

Նախ քան Մադրասում կամ Թիֆլիսում մեր լրագրութեան սկզբնաւորութեան մանրամասնութիւնները արձագրելու, առաջ բերենք անցեալից մի համառօտ տեսութիւն, թէ ինչպէս ըստ կարի հայոց մէջ տպագրութեան գործը և ինչ պայմանների մէջ ծնունդ առաւ մեր պարբերական մամուլը հնդկաստանում և Կովկասում։

Դրչագիրների, մագաղաթների դարն անցել էր։ Անմահ Գուտենբերգը Եւրոպային և համայն աշխարհին մեծ ծառայութիւն մատոյց տպագրական գործի ստեղծումով։ Եւրոպան մի դար էր, որ վայելում էր տպագրութեան արուեստի երախայրիքները, մամուլի օգտաւէտ պտուղները։ Հայոց հայրապետական գահի վրայ բազմող ժամանակակից կաթողիկոսն էր Ժրաջան ու հայրենասէր Միքայէլ Դ. Սեբաստացին։ Հոգևոյս հայրապետը լսելով, թէ Եւրոպայում ինչ քայլեր է անում ու ծաղկում տպագրութեան արուեստը, սըրտով փափագում էր իւր ազգի մէջ էլ տեսնել տպագրուած գրքեր ազգային լեզուով, որով միջոց պիտի ունենար ազգին ու ընդհանրութեան ծանօթացնելու Մեսրովպեան հրաշալիքի հետ։ Արարատեան երկրում տիրող հալածանքները հանգիստ չէին տալիս հայրապետին, և նա ժամանակ չունէը այդ մասին լուրջ մտածելու։ Այդպիսի բազմաթիւ հոգսերի մէջ էլ Միքայէլ կաթողիկոսին յաջողուեց գտնել հայազն Աբգար գալըին, որ էր ըստ Ոսկեբանի «ի զարմէ Թագաւորաց հայոց, եկեալ ի Հռոմ դեսպան Հայաստանեայց»։ Հայկական տպագրութեան հիմնադիր եղաւ անմահ Աբգար Եւդոկիացին, որը մեծ ջանքերով ուզում էր առաջ տանել իւր սիրած գործը 1560-ական թուականներին։ Նա իւր կենդանութեան ժամանակ կարողացաւ տպագրել հայերէն տառերով Սաղմոս (1565 թ.), Ժամագիրքը (1566 թ.) և այլ եկեղեցական գրքեր։ Երկու տարուց յետոյ էլ Կ. Պոլիս գնալով, այնտեղ էլ հաստատեց մի հայ տպարան։

Մեր ծրագրից դուրս է տպագրութեան գործի սկզբնաւորութեան ամեն մանրամասնութիւնները առաջ բերել, այլքանն միայն ասենք, որ մեծ աշխատանքի արդիւնք էր Աբգար Եւդոկիացու լոյս ընծայած «Սաղմոսարանը»։ Շատ, աշխատեց, շատ չարչարուեց, Հռոմից Վենետիկ գալով, քաղաքի ամենաբարձր իշխանութիւնից թոյլտուութիւն ստացաւ և իւր բարձր դիրքով ու պաշտօնով հազիւ կարողացաւ մի փոքրիկ սաղմոսի տպագրութիւնը գլուխ բերել, որը ճանաչւում է հայոց մէջ առաջին տպագրուած գիրքը։ Սաղմոսի վերջում գըրուած է՝ «Կատարեցաւ սուրբ երգարանս Դաւթի՝ լաւ և յընտիր օրինակ Գառնեցւոյ վարդապետի ի թուականիս հայոց Ռծէ, մայիս ծէ, աւուրն ուրբաթ, ժբ. ժամն...։ Ամենն (ամբողջն) երկու հարիւր և ութանասուն և երկու թուղթ է, և իսկի գրչի գիր չկայ ի գիրքս»։ Ուրեմն տպագրութեան գիւտից 110 տարի անցել էր, երբ հայոց մէջ տպագրութիւն երևեցաւ։

Աբգարից յետոյ Սուլթանշահ, Ոսկան, Վանանդեցի, Մխիթար Գոշ և նման յիշատակելի անձինք, նախանձախնդիր կացի տպամարդը։ Հարիւրների է հասնում այն ամերիկուհիների թիւը, որոնք բարձրագոյն մասնագիտական ուսումն են ստանում Գերմանիայի, Գաբրիզի և Զուիցերիայի համալսարաններում։

***

Այցելենք Ամերիկայի կանանց քոլէջներից երկուսը, մինը սպիտակ, միսը սև աղջիկների համար։

Ուէլզլի քոլէջը ամենից մեծն է Ամերիկայում. նա 800 ուսանողուհիներ ունի, գտնւում է Մասաչուզեցի նահանգում, Բոստոնից ժամ ու կէս հեռու՝ սրընթացով։ Մեր տեսած գրքոցներից թէ Ամերիկայում, թէ Անգլիայում և թէ այս կողմերը, ոչ մինն այնպիսի պատուական դիրք չունի, որպէս Ուէլզլի քոլէջը։ Բաղկացած է մի քանի շինութիւններից, որոնք կառուցուած են բլուրների վրայ, խիտ անտառով և մարգագետիններով շրջապատուած։ Բուն քոլէջի կողքին գտնւում է մի աննման փոքրիկ լճակ, ուր արտափայլում է կապոյտ երկինքը, իւր մարգաշատ շրջանակը, քոլէջի շէնքերի աշտարակները և ուսանողուհիների սիրուն դէմքերը, որոնք յաճախ թիավարում են և նաւամրցում լճակի վրայ։ Ոչ մի քոլէջ այնպիսի ճարտար թիավարուհիներ չունի, որպէս Ուէլզլին։ Մենք տեսել ենք և հիացել նրա տարեկան նաւամրցութեան հանդէսը—Boatday։

Ուսանողուհիների մեծ մասն ապրում է բուն քոլէջի շրջափակի մէջ, «ընտանիքների» մէջ։ Ամեն հինգ, վեց կամ աւելի օրիորդներ ապրում են միասին։ Այսպիսի է շրջադոյն համալսարանը և միքանի ուրիշ կարևոր համալսարաններ, մինչդեռ Հարվարդի նշանաւոր համալսարանը, որ մինչև անցեալ տարի յամառում էր կանանց թոյլ տալ յաճախելու դասախօսութիւններին, այժմ սկզբունքով ընդունել է այդ, թէև առայժմ որոշ սահմանափակումով։ Եւ կանայք դիտեն օգտուել իրենց ձեռք բերած իրաւունքներից. նրանք ուսանում են մի այնպիսի չանասիրութեամբ, որպիսին տղամարդերի մէջ հազուագէպ է գտնել։ Միջին թուով առած, աղջիկները աւելի լաւ են ուսանում, քան տղաները։ Համամասութիւնն առաջ տանելով, կասենք, որ միջին թուով առած, ամերիկացի կինն աւելի կրթուած է, քան ամերիկացի տղամարդը։ Այդ մասին մեզ հետու կըսանէը ամերիկուհիների արդի դրութիւնը ներկայացնելը։ Ով այդ մասին մերձաւոր ծանօթութիւն է ուզում ստանալ, թող կարդա «Revue des deux Mondes»-ի 1895-ի համարները—«La Situation des femmes aux Etats—Unis»։ Մենք տեսնենք անցողաբար, թէ ինչ աստիճանի վրայ է կանգնած ամերիկուհին կրթութեան մէջ, եկեղեցու գործում և գրականութեան մէջ։

***

Բազմաթիւ են Ամերիկայում այն քոլէջները, ուր կիներն ընդհանուր և մասնագիտական կրթութիւն կարող են ստանալ։ Համալսարաններից մէքանիսն ևս «համակրթական»(Coeducational)-են, այսինքն երկու սեռի ուսանողներն ուսանում են միասին։ Այսպիսի է Շիքագոյի համալսարանը և մէքանի ուրիշ կարևոր համալսարաններ, մինչդեռ Հարվարդի նշանաւոր համալսարանը, որ մինչև անցեալ տարի յամառում էր կանանց թոյլ տալ յաճախելու դասախօսութիւններին, այժմ սկզբունքով ընդունել է այդ, թէև առայժմ որոշ սահմանափակումով։ Եւ կանայք դիտեն օգտուել իրենց ձեռք բերած իրաւունքներից. նրանք ուսանում են մի այնպիսի չանասիրութեամբ, որպիսին տղամարդերի մէջ հազուագէպ է գտնել։ Միջին թուով առած, աղջիկները աւելի լաւ են ուսանում, քան տղաները։ Համամասութիւնն առաջ տանելով, կասենք, որ միջին թուով առած, ամերիկացի կինն աւելի կրթուած է, քան ամերիկացի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՈՐԾԱՒԵՐՋԻ ՆՇՈՒՆՆԵՐ

ՏՐԵՄՈՒՏԻ ԽՈՀԵՐ

(Նուէր I. C. B.)։

(Շար. տես «Նոր-Դար» № 7.)։

Կինը Գերմանիայում և կինը Ամերիկայում—սար ու ձոր տարբերութիւն կայ երկուսի ընկերային դրութեան մէջ։ Ամերիկան իրաւամբ կոչւում է Կիների Երկիր։ Զարմանալի չէ, որ այն գերմանուհիները, որոնք այցով կամ գործ փնտրելու համար գնում են Ամերիկա միառժամանակ մնալուց յետոյ, այլ ևս, չեն ուզում վերադառնալ իրենց հին հայրենիքը։ Այլ «այս է որ գտանք» ասելով, մնում են Ամերիկայում և հինգ տարի անցնելուց յետոյ՝ Ամերիկայ քաղաքացի գրւում։ Շենք կարող մոռանալ երբէք, թէ ինչպէս մեր ծանօթ մի գերման օրիորդ, մի օր մտաւ մի խմբագրատուն—Բոստոնումն էր այս—և հպարտ-հպարտ, ինքնավստահ և ուի բախտութիւնից փայլելով գոչեց, կէս անգլիերէն, կէս գերմաներէն.

—Sir, jest bin ich eine Amerikanerin, J gave my first vote for School Comitte election. («Սըր, հիմա որ ամերիկուհի եմ, այսօր առաջին անգամ քուէ տուի դպրոցական յանձնաժողով ընտրելու համար»)։

—«Շատ լաւ. կին ընտրեցիք, թէ տղամարդ»։

—«Sertain ly,a woman» (ի հարկէ,կին)։

Մեր անուշադրոյ բրիմինուհին, իսկ որ իսկ Նանկի էր գառել։

Բռնութիւնն ու տեղութիւնը չեն, որ մի ցեղ ձուլում են միւս քաղաքակրթեալ աւելի զօրաւոր ցեղի մէջ, այլ տղատութիւնը, համակրութիւնը և գերազանց կուլտուրան։

Կինը հենց սկզբից յարգուած է եղել Ամերիկայի գաղթականների մէջ։ Հասկանական է, որ այն հանգամանքը, որ սկզբում կիները թուով շատ աւելի նուազ էին, քան տղամարդիկը, նպաստել է կնոջ դիրքի բարձրանալուն։ Բայց ընկերային յարգական դիրքի և քաղաքացիական հաւասարութիւն իրարից շատ հեռու են։ Եւ վերջինս ձեռք բերելու համար՝ սերունդներ են մաքառել ու տակաւին մաքառում են Միացեալ-Նահանգներում։ Լուսի Ստոնի—օրհնուած լինի նրա լոյս յիշատակը—Լուսի Ստոնի ձեռքով սկսուած և այնքան զոհաբերութեամբ յառաջ տարուած գործն այսօր ահագին ծաւալ է ստացել, և գնում է յաղթական ճանապարհի վրայ։ Եւ այս յաղթութիւնը մեծ անձնուիրութիւն, կամք և միտք է պահանջում ամերիկուհիներից։

«Ճակատամարտը» մղւում է այսօր ամենայն խստութեամբ և եռանդով։ Տասնեակ հազարներ են այդ ճակատամարտի պինուորները, այս դէպքում հայերէն նորահնար բառով՝ «պինուհիները», և նրանք ունին իրենց կողմը ամբողջ

Բայց մեզ հետու կըսանէը ամերիկուհիների արդի դրութիւնը ներկայացնելը։ Ով այդ մասին մերձաւոր ծանօթութիւն է ուզում ստանալ, թող կարդա «Revue des deux Mondes»-ի 1895-ի համարները—«La Situation des femmes aux Etats—Unis»։ Մենք տեսնենք անցողաբար, թէ ինչ աստիճանի վրայ է կանգնած ամերիկուհին կրթութեան մէջ, եկեղեցու գործում և գրականութեան մէջ։

***

Բազմաթիւ են Ամերիկայում այն քոլէջները, ուր կիներն ընդհանուր և մասնագիտական կրթութիւն կարող են ստանալ։ Համալսարաններից մէքանիսն ևս «համակրթական»(Coeducational)-են, այսինքն երկու սեռի ուսանողներն ուսանում են միասին։ Այսպիսի է Շիքագոյի համալսարանը և մէքանի ուրիշ կարևոր համալսարաններ, մինչդեռ Հարվարդի նշանաւոր համալսարանը, որ մինչև անցեալ տարի յամառում էր կանանց թոյլ տալ յաճախելու դասախօսութիւններին, այժմ սկզբունքով ընդունել է այդ, թէև առայժմ որոշ սահմանափակումով։ Եւ կանայք դիտեն օգտուել իրենց ձեռք բերած իրաւունքներից. նրանք ուսանում են մի այնպիսի չանասիրութեամբ, որպիսին տղամարդերի մէջ հազուագէպ է գտնել։ Միջին թուով առած, աղջիկները աւելի լաւ են ուսանում, քան տղաները։ Համամասութիւնն առաջ տանելով, կասենք, որ միջին թուով առած, ամերիկացի կինն աւելի կրթուած է, քան ամերիկացի

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՎԿՈՐՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(Տե՛ս սկիզբը նախորդ թվի):

Ք.

Ահա ցուցակ այն հայկական տպագրութեանց, որոնք մեզ յայտնի են մինչեւ այսօր, եւ որոնց մասին մենք ուզում ենք մի քանի խօսք ասել:

Վենետիկ	1512	մ.
Ռոմա	1566	»
Ջուղա	1584	»
Լիսաբոն	1616	»
Միլան	1624	»
Գոռնի	1633	»
Ֆռանս	1640	»
Ամստերդամ	1660	»
Մարսէլ	1673	»
Կաֆայ	1713	»
Վիեննա	1719	»
Ս. Էջմիածին	1770	»
Պոլիս	1780	»
Մոսկուա	1819	»
Փիլիպպոս	1822	»

Ընդամէնը 330 տարուց աւելի է, որ մեր ազգի տպագրութիւնը ունի իր պատմութիւնը, որ ամենեւին ծանօթ չէ մեր հասարակութեան մեծ մասին: Ես ուզում եմ ցոյց տալ, որ մեր հին տպագրութիւնները, որոնք մեզ համար ունին մեծ արժէք, ոչ միայն մեր ազգի պատմութեան համար, այլ եւ ընդհանրապէս մարդկային գիտութեան համար, ունին մեծ նշանակութիւն, եւ որ մեր հին գրքերը ոչ միայն հետաքրքրական են, այլ եւ օգտակար:

Ես ուզում եմ խօսել մանաւանդ Նոր Նախիջեւանի տպագրութեան մասին, որ ամենից աւելի ծանօթ է մեզ, եւ որ ամենից աւելի ուսումնասիրուած է: Ես ուզում եմ ցոյց տալ, որ Նոր Նախիջեւանի տպագրութիւնը ոչ միայն ամենից աւելի ծանօթ է մեզ, այլ եւ ամենից աւելի ուսումնասիրուած է: Ես ուզում եմ ցոյց տալ, որ Նոր Նախիջեւանի տպագրութիւնը ոչ միայն ամենից աւելի ծանօթ է մեզ, այլ եւ ամենից աւելի ուսումնասիրուած է:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)։

Ս. Պետերբուրգ, 13 յունուարի (ն. ու.)։

Ներկայ ձմեռ Ռուսաստանի մայրաքաղաքում հայկական գաղութի մեջ շատ մեծ շարժում է տեղի ունեցել։ Ամենքն էլ զբաղված են եղել հայկական հարցերով։ Ամենքն էլ ուզում են իմանալ, թե ինչ է լինելու հայ ազգի ճակատագիրը։ Ամենքն էլ ուզում են իմանալ, թե ինչ է լինելու Թուրքիայի հայերի վիճակ

և կինը մի տարբեր գինետան մէջ, երբեմն տարբեր տարփածուներու հետ։ Հազուագիւտ դէպք չէ նաև (եւ՛լի ստորին դասակարգի մէջ տեղի կունենայ) միևնոյն գինետան մէջ այր և կնոջ գինովնալը և կռուիլը՝ նոյնիսկ իրարու գլուխ պատռելու չափ։

Երբ անգլիացիին ընտանեկան ներքին կապակցութիւնները համառօտակի քննելէ ետք, կանցնինք անոնց արտաքին յարաբերական և բարեկամական վիճակները աչքի առջև առնել, կրկին կը զգանենք զարմացումն պատճառելու աստիճան պաղութիւն և անտարբերութիւն։

Անգլիացին չունի արևելեան այն սերտ խնամիութիւնները, չունի գուրգուրական և կարեկցական այն ոգին դէպի իւր զրացիները, հին և նոր ազգականները կամ բարեկամները։ Զրացնութիւն բառը գրեթէ անուամբ միայն գոյութիւն ունի։ Երբ տան մը մէջ մահ պատահի, զրացոյն ամենէն քաղաքավարական և կարեկցական արտայայտութիւնն է՝ դագաղը դուրս հանելու ժամանակ տան վարագոյրը վար ձգել։ Հազուագիւտ են այն զրացիները, որ մեռելատուն երթան և վշտացեալին միքանի մխիթարական խօսք ուղղեն։

Ընտանիքները բոլորովին անհաղորդ չեն ապրեր իրարու հետ. կունենան երբեմն բարեկամական այցելութիւններ, բայց շատ քիչ անգամներ. այս կարգի յարաբերութիւններ և տեսակցութիւններ ձեակերպութիւններով խճողեալ են, պարզութիւնն և անկեղծութիւնը գրեթէ բացառիկ ընտանեաց և բացառիկ պարագաներու մէջ տեղի կունենան։

Քրիստոս գոգցես հին և նահապետական կեանքը մի աստիճան չափաւորելու համար արտօնած է ամուսնացեալ մարդուն՝ հայրը և մայրը թողուլ ու կընոջը հետ երթալ. քաղաքականացեալ անգլիացին կարծես թէ, թողուլ բառը մոռնալ թարգմանած է, այնպէս որ մէկը ամուսնանալէ ետք, բոլորովին կը խզէ իւր յարաբերութիւնները և նոյնիսկ այն բնածին և թեթև աստիճանի կարեկցական ոգին, որ ունէր դէպի ծնողը։ Միևնոյն քաղաքին մէջ կապրին ծնողները և իրենց ամուսնացեալ զաւակները, սակայն տարօրինակ չէ իրենց համար, չսեմ տարիներ, գոնէ երկար ամիսներ, առանց տեսակցութեան անցնել, և երբ կրտեսակցին, պարզ ձեակերպութեանց տակ կը յայտնուին իրենց թեթև զգացումները։

Երբ Արեւելքէն նոր կուգայ մէկը, արդէն նախապաշարուած լինելով, թէ քաղաքականացեալ և մանաւանդ սրբագնացեալ երկիր մը փոխադրուած է, արեւելեան պարզ և անկեղծ բնաւորութիւնը կրկրկնապատկէ և կրփորձէ անգլիացւոյն հետ ճշմարիտ բարեկամութիւն և յարաբերութիւններ հաստատել, միքանի փորձերէ ետք, չուտով կրհամոզուի, թէ իւր պարզութիւնն և անկեղծութիւնը պէտք է չափաւորէ. միևնոյն ատեն կունենայ նաև այդ անկեղծութեան վնասները։

Ներկայ անկողմնակալ տեսութիւններուս նպատակը չէ՝ ըսել թէ Անգլիոյ մէջ երբէք չկայ ընտանեկան գուրգուրանք, բարեկամական անկեղծութիւն սէր և համակրանք. անշուշտ երբեմն ընտանիքներու մէջ կրտեսնուին ընտանեկան ոգոյն համապատասխանող բաներ, բայց բացառութիւնները չեն կրնար ընդհանուր դրութիւնն արդարացնել։ Միևնոյն ատեն, ամբողջ բացառութիւնները յարգելով, անգլիական և արևելեան կենցաղավարական դրութիւնները երբ դատողութեան ենթարկենք, պիտի տեսնենք, որ արևելեան կեանքը, որն արդէն իւր մէջ պահած և սնուցած է ընկերասիրական ոգին, մարդկային պահանջմանց աւելի համապատասխանող է։

Ե. Մէլքոմեան։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴՈՐԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ

—

«Dally Chronicle»-ի ասելով, Աբդուլ-Համիդը վճռել է պատասխանել Վիկտորիա թագուհուն և աշխատել համոզելու նրան, որ նրան, թագուհուն մոլորեցրել են սուտ զեկուցումներով և չափազանցուած տեղեկութիւններով Փոքր Ասիայի իրերի դրութեան մասին։

—

Կ. Պոլսից «Standard»-ին հեռագրում են, թէ Վիկտորիա թագուհու ձեռնհասութեան վրայ, որ նամակ էր գրել սուլթանին, նայում են իբրև մի ապացոյցի վրայ, թէ քանդուել է եւրոպական միաբանութիւնը։

—

«Politische Correspondenz»-ը հաստատում է այն լուրերը, թէ հայերն ուզում են հաշտուել Բ. Դրան հետ։ Այդ լրագիրն ասում է, թէ հայերի դէմի Բ. Դուռն ունեցած յարաբերութիւնների մէջ յիրաւի կարևոր փոփոխութիւն է պատրաստւում, և թէ պէտք է սպասել, որ դադարեցուի այն ազիտացիան, որով ուզում են բարելաւել հայերի դրութիւնը Թիւրքիայի վրայ արտաքին կողմից ճնշում գործելով։ Հայ մեծամեծները (?) հետզհետէ աւելի ու աւելի համոզւում են, որ ի նկատի ունենալով միջազգային ներկայ դրութիւնը, օտարերկրեայ պետութիւնների կողմից ուռանդով ճնշում գործելու վրայ ունեցած յոյսը աւելի ու աւելի չքանում է, մանաւանդ, որ Անգլիան, որի սեպհական գործերը պահանջում են ամբողջապէս իրենց վրայ դարձնելու իւր ուշադրութիւնը, չի կարող եռանդուն գործակցութիւն ցոյց տալ հայերին։ Ուստի, ինչպէս ասում են, յիշեալ մեծամեծները մտադիր են չափաւորիչ ազդեցութիւն գործել իրենց հայրենակիցների վրայ։ Նրանք վճռել են մինչև անգամ սուլթանին մի ազերսագիր ներկայացնել, խնդրելով փաղիշահի ողորմածութիւնն ու հովանաւորութիւնը։

ԹԻՒՐՔԻԱ.—Տարրական մի ճշմարտութիւն է, որ թուրք զօրքը համեմատելով եւրոպական առաջնակարգ, նոյնիսկ երկրորդական պետութիւնների զօրքերի հետ, շատ յետ է մնացել ամեն տեսակէտից։ Թուրք կառավարութիւնը կատարելապէս համոզուած լինելով այդ ճշմարտութեան և միանգամայն քաջ գիտնալով իւր երկրի դիրքն ու նրա պահանջները, շատ անգամներ ծրագրել է բարեփոխութիւններ մտցնել զօրքի կազմակերպութեան մէջ, սակայն չլինելով կանոնաւոր հսկողութիւն, և յարատևելու եռանդ, այդ ամէնի եղած ձեռնարկութիւնները մնացել են անհետևանք, ծախսուած մեծամեծ գումարները վատնուել են իզուր, և այսօր թուրք զօրքը գտնւում է համարեա նոյն դրութեան մէջ՝ ինչ դրութեան մէջ որ էր տասնեակ տարիներ առաջ՝ աննշան փոփոխութեամբ։

Պատերազմական զօրքերին հմուտ գնդապետ Կ. Դորսկին եւրոպական թերթերից մէկում իւր լոյս ընծայած յօդուածի մէջ՝ ի միջի այլոց՝ այսպէս է խօսում թուրք զօրքի մասին։

Հեղինակը յայտնում է, որ շատ անգամներ ձեռնարկուել է թուրք զօրքի բարեփոխութեան գործին, սակայն մինչև այժմ էլ մացուած չենն, որովհետև այդ բանի համար հարկաւոր է դրամ, որը անկարող է եղել թրքական գանձարանը մատակարարել։ Դորսկիի կարծիքով, թուրք զօրքը եւրոպական զօրքերի ներկայ դրութեան համեմատութեամբ 50 տարի յետ է մնացել։ Օսմանեան պետութեան զօրքի թիւը խաղաղութեան ժամանակ հասնում է 175,000-ի, իսկ պատերազմի ժամանակ այդ թիւը կարող է բարձրանալ մինչև 400,000-ի։ Թրքական պատերազմական ոյժերը կազմակերպուած են եւրոպականներին համապատասխան, սակայն ընդունուած կարգերը Թիւրքիայում գոյութիւն ունին միայն թղթի վրայ։ Իսկական զօրաբանակ, գունդ, վաշտ և այլ պատերազմական միութիւնները գործադրւում են միայն պատերազմի ժամանակ։ Գեներալները շատ անգամ չգիտեն իրենց հրամանատարութեան տակ գտնուող մասերը և կառավարում են միայն իրենց ձեռքի տակ գտնուած ցուցակներով։ Շատ սակաւ է պատահում, որ ամբողջ մի գունդ կեդրոնացած լինի միայն մի զօրանոցի մէջ։ Յաճախ պատահում է, որ իւրաքանչիւր վաշտ կամ գումարտակ տեղաւորուած է լինում քաղաքի զանազան շինութիւնների կամ գիւղերի մէջ և այդ՝ զօրքի անտեսական պիտոյքների մատակարարութիւնը դիւրացնելու նպատակով։ Թնդանօթաձգութեան պիտոյքների և պաշարեղէնի կառքերն ու շարժական հիւանդանոցները գոյութիւն ունին միայն անուամբ՝ զուրկ բոլորովին կանոնաւորութիւնից։ Հեղինակի կարծիքով թուրք զօրքի սպառազինութեան գործը առնուազն պահանջում է 8—12 շարաթ ժամանակ, և դժուար թէ ներկայ ժամանակում, աւելացնում է հեղինակը, որ և իցէ եւրոպական պետութիւն պատերազմ սկսելու մտադրութիւն ունեցած դէպքում իւր հակառակորդին համաձայնի այդքան երկար ժամանակ տալ պատրաստուելու համար, իսկ արդի պահանջների համեմատ 5—8 օրից գործի ձեռնարկել ուզած ժամանակ, թուրք զօրքը թէ թուի և թէ պատերազմական պատրաստութիւնների կողմից բոլորովին պակասաւոր պէտք է լինի։

Ահա զօրքի այս թերի կողմերն են, որ Թիւրքիային ներկայացնում են իբրև մի սակր պետութիւն, անկասկած լուրջ դիմադրութիւն անելու եւրոպական որ և իցէ տէրութեան։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսան

ՐԱՖՖԻ

1) «ԽԱՉԱԴՈՂԻ ՑԻՇԸ ԵԿԱԾՆԸ» 4 մասերն մէկ գրքի մէջ ամփոփուած. երկրորդ տպագրութիւն, գինն է 2 ր. 50 կ.
2) ՋԱՀՐՈՒՄԱՐ. գինն է 2 ր.
3) ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՆՆԵՐԸ ր. տպ., 1 ր. 75 կ., ճանապարհածախսով 2 ր.։
4) ՏԱՃԿԱՀԱՑՔ. գինն է 40 կ.

Նոյնպէս Րաֆֆիի միւս աշխատութիւնները ցանկացողները պէտք է դիմեն՝ Тифлисъ, Аннѣ Раффи.
(397) 2—2

ТРЕБУЮТСЯ АГЕНТЫ для продажи выигрышныхъ билетовъ съ разсрочкой платежа и страхованію
Прос. адрес. банкирской конторѣ
СПБ. И. А. ШИФЪ, Гороховая, 13.
М 24—8

Թիֆլիսի կապետների կորպուսի
ՊԱՐԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉ
ԳԼԻՆՍԿԻ
Սապէօրնայա փող., № 26, նոր թատրոնի տան։

Այն անձերի համար, որոնք ցանկանում են Զատկի ծեռների համար ուսումնասիրել եւրոպական պարերը, սոյն յունուարի 20-ից մինչև ապրիլի 1-ը բացւում է նոր դասընթաց։ Վճարը չափաւոր։ Աշխատութիւնն ամենայն ներկայացիի։ 3—2.
(395)

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱԳԻՒՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ Առանի մէջ նշանակուած է աճուրդ սոյն յունուար ամսի 29-ին առանց կրկնաճրդի՝ կապալով տալու համար ս. Էջմիածնի Վերայի այլևին։
Անդամ Կոնսիստորիայի՝ Համազասպ Վարդապետ
(398) 3—1



Фабрика піанино А. КОППЪ
(Михайловская, № 132-й).
Продаются піанино изъ лучшихъ мѣстныхъ и заграничныхъ матеріаловъ на металлическихъ доскахъ съ перекрестными рунами. Отпускъ піанино на прокатъ. Пріемъ инструментовъ въ починку.
(367) 50—37

ԳՈՐԾԱՐԵՑԻՔ ԲԱՑԱՌԱՊԷՍ
ԴՈՒԽԻ «ԿԱՊՐԻՋ ՆԵԻԱՑԻ»—*խիտ գիմացկուն են և հոտաւէտ*
ՍԱՊՕՆ «ԿԱՊՐԻՋ ՆԵԻԱՑԻ»—*առանձն. հաճելի է գործածմանլիս*
Ս. Պ. Բ. ՏԵԽՆՈ-ԽԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈ ԱՈՏՈՐԻԱ
Գլ. Складъ: С.-ПЕТЕРБУРГЪ, площ. 9 МОСКВА, ВАРШАВА

BATEAUX a VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET Cie

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

„Ն. ՊԱՔԷԼ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղիղ երթեւեկութիւն ՄԱՐՍԷյԼԻՑ ԲԱԹՈՒՄ և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷյԼ երկու շաբաթը մի անգամ։

Բաթումից Մարսէյլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Պոլիս քաղաքները։

Բաթումից դուրս է գալիս չորեքշաբթի, 24 յունուարի (5 փետրուարի) «Միլկասի շոգենաւը, նաւապետ՝ Բուշէլ։
Բաթումից Պարիզ հաղորդակցութեան տոմսակները տոկոտական զիջումն ունին։
Ապրանք յանձնելու կամ ճանապարհորդութեան վերաբերեալ տեղեկութիւնները ստանալու համար դիմել՝
Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴՈՒՐՆՈՑԻՆ, նաւահանգստում։
Թիֆլիսում—պ. ԲՈՐԵԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիմոնի փողոց, քարվանս. Դէորգ՝ աղայի։
Բաթումում—պ. Սամուէլ Դիլբարեանին, Գալիւբեակինսկայա հրապարակ։
Նովոռոսիյսկում—պ. ԼՈՒԻ ՌԵՆՈՑԻՆ։
(392) 20—4

ՕՃԻՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՂՋԿԵՐԱՆՑ ՀԱՄԱՐ
ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՈՆ է 22,500,000 րուբլի։
Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահւում են պետակ. բանկում։
Մնողներին, խնամատարներին և առհասարակ այն անձանց, որոնք ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, «Ոռոսիա» ընկերութիւնը առաջարկում է օժիտի (բաժինքի) ապահովագրութիւնը.
Օրինակ, եթէ ցանկանում են երկու տարեկ աղջկայ համար ապահովացնել 5000 րուբլի օժիտ, այնպէս որ, 18 տարեկան ժամանակին ստանան այդ գումարը, (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը «Ոռոսիա» ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամսից յետոյ 52 րուբլի, (ուրեմն ամբողջ տարուայ ընթացքում 208 րուբլի.)
Սոյնանման ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձուին բոլոր իւր վճարած տուրքերը (պրեմիաները,) եթէ միայն ապահովագրուած երեխան վախճանուի պայմանաւորեալ ժամանակից առաջ։
Առ 1-ն յունուարի 1893 թ. «Ոռոսիա» ընկերութիւնը 10.811 աղջ՛կանց համար ապահովագրած ունի բաժինք 24.665.300 րուբլու գումարի։
Տղայ երեխաների համար ևս կարելի է ապահովացնել գրամագլուխ նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ գրամագլուխը կրստացուի իբրև թոշակ (պենսիա) կրթութիւնը չարունակելու համար, եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժամանակամիջոցը։
Ապահովագրութեան մասին յարաբերութիւնները ընդունւում և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդւում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեպհական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար՝ ընկերութեան վարչութիւնն մէջ՝
ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիևսկայա փ., տ. № 6. երկրորդ յարկում և բոլոր գործակալութիւններում կայարութեան բոլոր քաղաքներում։
(334) 50—48.

Հնարաւորութիւն չունենալով առանձին նամակով դիմելու իւրաքանչիւրին, սրանով խնդրում եմ այն յարգելի անձերին, որոնք ինձնից ստացել են «**ՄՈՌԱՑՈՒՆ ԱՃԽԱՐՀ**» գրքերիցս կամ խոսքով և կամ առանց կամ սեպհի վաճառելու, որքան կարելի է աշխատեն շուտ վաճառել և գները ուղարկել, որով նպաստած կլինեն «**ՄՈՌԱՑՈՒՆԱՑ ԱՃԽԱՐՀ**»-ի Դ. և Դ. գրքերի շուտ լոյս տեսնելուն. արդէն պատրաստ են մամուլին յանձնուելու։

Սարկ. Ե. ՃՈՒՂՈՒՐԵԱՆ

Тифлисъ Дозв. Цензурою 16-го Января 1896 г. Տպարան Ս. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А. О. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. Церковный дворъ.